ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. Ա Բ Ր Ա Հ Ա Մ Յ Ա Ն Ի Ն

Հ ա ղ ո ր դ ո ւ մ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2009 թվականի գործունեության մասին

Ազգային ժողովի մեծարգո նախագահ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2009թ. ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, դատարանում մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, հետաքննության և նախաքննության, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատախազական գործունեության մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայի նիստերում և խորհրդակցություններում:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներին համապատասխան, աշխատանք է կատարվել մարդու, սեփականության, տնտեսական գործունեության դեմ ուղղված, ընդհանուր բնույթի, զինվորական, կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների բացահայտման, քննության որակի ու արդյունավետության բարելավման, դիմումների քննարկման, կազմակերպական-վերահսկողական, միջազգային համագործակցության և այլ ոլորտներում:

Հաշվետու տարում գրանցվել է հանցագործության 14339 դեպք՝ նախորդ տարվա 9271-ի դիմաց, դեպքերն աճել են 5068-ով (2008թ.՝ 843) կամ 54.7%-ով (2008թ.՝ 10%), որոնցից 113 (2008թ.՝ 2115) դեպքով կամ 11%-ով (2008թ.՝ 194.6%) աճել են <u>մարդու դեմ ուղղված</u>

հանցագործությունները: Ընդ որում, աճել են առողջությանը վնաս պատճառելու (505-1436) (բացառությամբ ծանր վնաս պատճառելու), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները (63-73), այդ թվում՝ բռնաբարության և բռնաբարության փորձի դեպքերը (19-21): Նվազել են սպանության (78-68), սպանության փորձի (30-29), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը (215-181):

Հայաստանի Հանրապետությունում այս բնույթի հանցագործությունների աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008թ. ընթացքում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից չէին հաշվառվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված այն հանցագործությունները, որոնց վերաբերյալ քրեական գործի հարուցումը մերժվել էր դիմողի բողոքի բացակայության պատճառով: 2008թ. ընթացքում հանրապետության տարածքում արձանագրված՝ միայն անձի առողջությանը թեթև և միջին ծանրության վնաս պատճառելու վերաբերյալ 1096 դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել է հիշյալ հիմքով, և այդ դեպքերը չեն հաշվառվել, իսկ 2009թ. գրանցվել է այդ բնույթի 1140 դեպք, որոնք գրանցվել են:

Դատախազության նախաձեռնությամբ 2009 թվականին հաշվառվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված և 3603 անձի նկատմամբ կատարված հանցագործության դեպքեր, ինչը հնարավորություն է տվել ունենալու հանցավորության իրական վիճակն արտացոլող պատկեր:

Աճել են սպանությունների (73.1%-73.6%), սպանության փորձերի (73.4%-86.3%), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (80.2%-95.2%), այդ թվում՝ ծանր մարմնական վնասվածքների (77.7%-85.7%), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (96.9%-98.7%), մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների (93.5%-99%) բացահայտման ցուցանիշները: 2009թ. վարույթում քննված քրեական գործերով բացահայտումը կազմել է 82.9% (2008թ.՝ 71.7%):

Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 68 (2008թ.՝ 78) և սպանության փորձի 29 (2008թ.՝ 30) դեպքերից համապատասխանաբար 28-ը (2008թ.՝ 40) և 10-ը (2008թ.՝ 16) արձանագրվել են Երևան քաղաքում:

Արձանագրված 68 սպանությունից 18-ը չի բացահայտվել (բացահայտումը կազմել է 73.6 % (2008թ.՝ 73.1 %)), իսկ 29 սպանության փորձից չի բացահայտվել 4-ը (բացահայտումը կազմել է 86.3 % (2008թ.՝ 73.4 %)):

2009թ. Հայաստանի Հանրապետությունում մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերի առթիվ նախապատրաստվել է 9299 նյութ (2008թ.՝ 7578), որոնցից 954-ով կամ 10.2 %-ով (2008թ.՝ 12.8 %) հարուցվել են քրեական գործեր:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 8150 նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականությունը, որոնցից 5536-ը նախապատրաստվել է նախաքննության, իսկ 2614-ը՝ հետաքննության մարմինների կողմից: Ստուգման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժելու մասին 61 որոշում վերացվել է, որոնցից 32-ը կայացվել է նախաքննության, իսկ 29-ը՝ հետաքննության մարմինների կողմից:

2009թ. նախապատրաստված նյութերի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից տրվել է 137 գրավոր ցուցում, որոնցից 80-ը՝ նախաքննության, 57-ը՝ հետաքննության մարմիններին:

2009թ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 867 քրեական գործի նկատմամբ (2008թ.՝ 727) իրականացվել է դատախազական հսկողություն, որոնցից 360-ի կամ 41.9 %-ի վարույթը կարճվել է: 223 քրեական գործի վարույթը կասեցվել է, որոնցից 177-ը՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, իսկ 46-ը՝ մեղադրյալի հետախուզման կամ այլ հիմքերով:

2009թ. վարույթը կարճված քրեական գործերի թիվը 6.9%-ով աճել է, ինչը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. ընդունած համաներման ակտի կիրառմամբ:

2009թ. քրեական հետապնդում իրականացնելու համար մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ այլ պետություններից ստացվել են 11 քրեական գործ և 2 նյութ:

Հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված վնասը հիմնականում արտահայտվել է հանցավոր ոտնձգություններից տուժած անձանց պետպատվերի շրջանակներում իրականացված բուժման ծախսերով: Հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում դատաքննությունն ավարտված գործերով մարդու դեմ ուղղված հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված վնասը կազմել է 313010 (2008թ.՝ 796400) դրամ, որից վերականգնվել է 158000 դրամը:

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 486 (2008թ.՝ 459) քրեական գործ՝ 577 (2008թ.՝ 524) անձի վերաբերյալ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ դատարան է ուղարկվել նույն բնույթի 17 (2008թ.՝ 15) քրեական գործ: Դատարան ուղարկված քրեական գործերը կազմել են ավարտված քրեական գործերի 58.1 %-ը:

Դատարան ուղարկված 519 անձի վերաբերյալ 445 քրեական գործի դատական քննությունն ավարտվել է: Արագացված դատաքննություն է իրականացվել 165 (37 %) քրեական գործով՝ 183 անձի վերաբերյալ:

Դատական քննությունն ավարտված 445 (2008թ.՝ 405) քրեական գործից 384-ով (2008թ.՝ 365) (86.2% (2008թ.՝ 90 %)) 443 (2008թ.՝ 419) անձ դատապարտվել է:

2009թ. ընթացքում դատապարտված անձանցից 24-ը (2008թ.՝ 35) կամ 5.4 %-ը (2008թ.՝ 8.3 %) անչափահասներ են, 50-ը կամ 11.2 %-ը՝ կանայք, 53-ը կամ 11.9 %-ը՝ նախկինում դատված:

Նշված բնույթի հանցանք կատարելու համար դատապարտված 443 անձից՝

- 303-ը կամ 68.3 %-ը դատապարտվել են ազատազրկման, այդ թվում՝
- 11 անձ դատապարտվել է ցմահ ազատազրկման,
- 68-ը կամ 15.3 %-ը՝ տուգանքի,
- 7-ը կամ 1.5 %-ը՝ կալանքի,
- 65-ի կամ 14.6 %-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժը պայմանականորեն չի կիրառվել,
- 8-ի կամ ազատազրկման դատապարտված անձանց 1.8 %-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը:

Դատարանի վարույթում գտնվող 76 անձի վերաբերյալ 61 քրեական գործի վարույթ կարճվել է:

Արձանագրվել է **սեփականության դեմ ուղղված** հանցագործությունների աճ 1281 դեպքով կամ 29.8%-ով (5578-4297):

2009թ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հանցագործությունների մեջ կազմել է 41.7% (2008թ.՝ 51.2%), (2009թ.՝ 5578-13372, 2008թ.՝ 4297-8383), այսինքն՝ նվազել է շուրջ 10%-ով:

Դրան զուգահեռ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գրանցված դեպքերի և վարույթում առկա քրեական գործերի աճի պայմաններում, այդ բնույթի հանցագործությունների բացահայտման գործընթացում արձանագրվել է որոշակի դրական արդյունք՝ նախորդ տարվա 60.8%-ի դիմաց 2009թ. բացահայտումը կազմել է 70%:

2009թ. հանրապետությունում արձանագրվել է պետական կամ հանրային գույքի հափշտակությունների աճ 62 դեպքով կամ 29%-ով (342-280)՝ բացահայտման ցուցանիշների բարելավմամբ՝ 82% (2008թ.՝ 75.6%): Դրան զուգահեռ, որոշ մարզերի տարածքներում և Երևան քաղաքում արձանագրվել է պետական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նվազում: Մասնավորապես՝ Երևան քաղաքում այդ բնույթի դեպքերը նվազել են 7-ով՝ բացահայտման ցուցանիշների նվազմամբ՝ 69.2% (2008թ.՝ 75.6%):

Ընդհանուր հանցագործությունների թվում, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, զգալի տեսակարար կշիռ են կազմում անձնական գույքի հափշտակությունների, հատկապես՝ բնակարանային գողությունների, ավազակային հարձակումների, կողոպուտների դեպքերը:

Գողության դեպքերի վերաբերյալ հաղորդումների կապակցությամբ նախապատրաստված 3074 նյութից քրեական գործ է հարուցվել 2245-ով: Մերժվել է 709 քրեական գործի հարուցումը, որոնցից 440-ը՝ արդարացման, 269-ը՝ ոչ արդարացման հիմքերով: Հայաստանի Հանրապետության քննչական մարմինների վարույթում քննվել է գողության վերաբերյալ 2788 քրեական գործ, որոնցից ավարտվել է 650-ը: Կարճվել է 101 քրեական գործի

վարույթ, որոնցից 34-ը՝ արդարացման, 67-ը՝ ոչ արդարացման հիմքերով: Դատարան է ուղարկվել 539 քրեական գործ՝ 820 անձի վերաբերյալ, որոնցից 430-ը գտնվել է կալանքի տակ: Կասեցվել է 1691 քրեական գործի վարույթ, որոնցից 29-ը՝ անձը հետախուզման մեջ լինելու հիմքով:

2009թ. Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ավազակային հարձակումների 151 (2008թ.՝ 124) դեպք, որը 2008թ. համեմատությամբ աճել է 27 դեպքով կամ 21.7%-ով: Ավազակային հարձակման դեպքերից 88-ը կամ 58.2%-ը կատարվել է Երևան քաղաքում: Չնայած 2008թ. համեմատությամբ այդպիսի դեպքերը նվազել են 4-ով, սակայն, միաժամանակ, նվազել են դրանց բացահայտման ցուցանիշները՝ 51.4% (2008թ.՝ 55.7%):

2009թ. արձանագրվել է կողոպուտի դեպքերի 39-ով (263-224) աճ, բացահայտումը՝ 64.1%-ով (2008թ.՝ 61.8%):

2009թ. 326-ով կամ 46.4%-ով աճել են խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերը (702-376), իսկ պետական կամ հանրային գույքի հափշտակությունները՝ 6-ով (36-30), որը կազմում է ընդհանուր դեպքերի 4.8%-ը (738-36):

2009թ. գրանցված <u>**տնտեսական գործունեության դեմ ուղղված**</u> հանցագործությունների զանգվածում կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերի տեսակարար կշիռը կազմել է 136 դեպք կամ 19.5%:

Կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել են 56-ով կամ 70%-ով, միաժամանակ՝ բացահայտման ցուցանիշների բարելավմամբ: Գրանցված 136 դեպքից 26-ը բացահայտվել է, 108-ը չի բացահայտվել, 2-ը գտնվում է ընթացքի մեջ, բացահայտումը կազմել է 19.4% (2008թ.՝ 4.2%):

2009թ. գրանցվել է ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության 124 (2008թ.՝ 86) դեպք, որոնցից բացահայտվել է 84-ը, 6-ը չի բացահայտվել, 17-ը գտնվում է ընթացքի մեջ, բացահայտումը կազմել է 93.3% (2008թ.՝ 78%):

2009թ. գրանցվել է մաքսանենգության 72 (2008թ.՝ 69) դեպք, որոնցից բացահայտվել է 18-ը, 20-ը գտնվում է ընթացքի մեջ: Հարուցվել է 39 քրեական գործ, մերժվել է 1 նյութ: Դատարան է ուղարկվել 22 քրեական գործ՝ 24 անձի նկատմամբ, կասեցվել է 6 գործի վարույթ, որոնցից 4-ը՝ հետախուզումով:

2009թ. 19-ով աճել են հարկերից և տուրքերից խուսափելու հանցագործության դեպքերը՝ (159-140), դրանցից բացահայտվել է 104-ը, որը կազմել է 87.4% (2008թ.՝ 73.3%):

Նկատի ունենալով, որ հիշյալ հանցագործություններն ունեն թաքնված բնույթ, ուստի մաքսանենգության և ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերի թվաքանակի գրանցված աճը պետք է դիտել որպես դրական երևույթ, ինչը վկայում է համապատասխան մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման մասին: Սակայն, միևնույն ժամանակ, ապօրինի ձեռնարկատիրության դեպքերի աճը վկայում է տարածքային հարկային մարմինների կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումների ոչ բավարար մակարդակի մասին, ինչի արդյունքում բազմաթիվ անձանց հաջողվում է դուրս մնալ նրանց տեսադաշտից և տարիներ շարունակ իրականացնել ապօրինի ձեռնարկատիրություն:

Արձանագրվել է կեղծ խմիչք պատրաստելու 49 դեպք, որոնցից 26-ով հարուցվել է քրեական գործ, 12-ով մերժվել է, դրանցից 7-ը՝ ոչ արդարացման հիմքով:

2009թ. արձանագրվել է շորթման 19 դեպք, որոնցից 12-ով հարուցվել է քրեական գործ, 5-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Դատարան է ուղարկվել 11 քրեական գործ՝ 12 անձի նկատմամբ, որոնցից 4-ը եղել է կալանքի տակ:

2009թ. <u>**ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչությունը**</u> հսկողություն է իրականացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում քննվող քրեական գործերի նկատմամբ : Վարույթ է ընդունվել 173 (2008թ.՝ 139) քրեական գործ, այդ թվում՝ հարուցվել է 129-ը (2008թ.՝ 110), այլ մարմիններից ստացվել է 29-ը (2008թ.՝ 23), վերսկսվել է նախկինում վարույթը կասեցված կամ կարճված 15 (2008թ.՝ 6) և ավարտվել է 113 (2008թ.՝ 87) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 72-ը (2008թ.՝ 69) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար, 40 (2008թ.՝ 18) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ են ուղարկվել 17-ը (2008թ.՝ 7), 4 (2008թ.՝ 1) քրեական գործի վարույթ միացվել է,

իսկ 35-ը՝ կասեցվել (2008թ.՝ 20), այդ թվում՝ «մեղադրյալը թաքնվել է քննությունից» հիմքով՝ 10-ը (2008թ.՝ 6), իսկ «հայտնի չէ անձը, որը պետք է ներգրավվի որպես մեղադրյալ» հիմքով՝ 25-ը (2008թ.՝ 10):

2009թ. ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում նախապատրաստվել և դատախազական հսկողության ու դատավարական ղեկավարման տակ է գտնվել 222 նյութ (2008թ.՝ 173), որոնցից 129-ով (2008թ.՝ 110) հարուցվել են քրեական գործեր, 56-ով (2008թ.՝ 63) մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 17-ը (2008թ.՝ 45), ոչ արդարացման հիմքերով՝ 37-ը (2008թ.՝ 18), այդ թվում 21-ը՝ համաներման կիրառմամբ:

2009թ. ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում քննված քրեական գործերից 72-ը 112 անձի (2008թ.՝ 69 գործ, 89 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2009թ. ընթացքում դատարաններում մեղադրանքները պաշտպանվել են 96 գործով՝ 133 անձի (2008թ.՝ 80 գործ, 93 անձ) նկատմամբ, որոնցից արագացված քննության կարգով քննվել է 51 գործ՝ 62 անձի նկատմամբ (2008թ.՝ 49 գործ, 61 անձ):

Վերաքննության կարգով բողոքարկվել է ընդհանուր իրավասության դատարանների 18 (2008թ.՝ 3) դատական ակտ, որոնցից 2-ը (2008թ.՝ 2)՝ արդարացման դատավճիռների, 14-ը (2008թ.՝ 1)՝ պատժի մեղմության, 2-ը՝ խիստ պատիժ նշանակելու (2008թ.՝ չի եղել) դեմ:

Մեղադրողների վերաքննիչ բողոքներից բավարարվել է 8-ը, մերժվել՝ 9-ը:

Բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնք, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չեն ընդունվել և վերադարձվել են:

2009 թվականին 96 քրեական գործով 133 անձի նկատմամբ (2008թ.՝ 80 գործ՝ 93 անձ) պաշտպանվել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 108 անձի (2008թ.՝ 61) նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում 2009թ. գրանցվել է **ընդհանուր քնույթի հանցագործության** 8918 (2008թ.՝ 5395) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 3523-ով կամ 65.3%-ով:

2009թ. Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 1238 (2008թ.՝ 763) դեպք, որոնցից 539-ը՝ իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության, 690-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների, կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, 6-ը՝ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեներգործուն, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու, 1-ը՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելու կամ շորթելու, 1-ը՝ թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու:

Կարևորելով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ Հայաստանի Հանրապետությունում ծավալված պայքարը և այս հանցատեսակի վերաբերյալ քրեական գործերի քննության նկատմամբ առավել ակտիվ ու ընդգծված միասնական պատժողական քաղաքականություն վարելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 09.12.2009թ. N 54 հրամանով ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժին:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված 1238 (2008թ.՝ 763) դեպքից բացահայտվել է 959-ը (2008թ.՝ 595) կամ 87.4%-ը (2008թ.՝ 77.9%), իսկ իրացման 699 (2008թ.՝ 284) դեպքից բացահայտվել է 475-ը (2008թ.՝ 163) կամ 62.2%-ը(2008թ.՝ 57.3%):

2009թ. թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 779 անձ (2008թ.՝ 493), որոնցից 25-ը (2008թ.՝ 15) կանայք են, 8-ը (2008թ.՝ 8)՝ անչափահաս, 30-ը (2008թ.՝ 12)՝ այլ երկրների քաղաքացիներ:

2009թ. աճել են հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 2009թ. արձանագրվել է 2984 (2008թ.՝ 1802) դեպք:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունները հանրապետությունում աճել են 417 դեպքով (791-374), մինչդեռ 46-ով նվազել են մահվան ելքով դեպքերը (233-187), որի հետ մեկտեղ բարելավվել է նշված հանցատեսակի բացահայտման վիճակը: Ընդ որում, բացահայտումը կազմել է գրանցված դեպքերի 91.5%-ը (2008թ.՝ 69.1%):

Մահվան ելքով վթարների և վրաերթերի նվազումը մեծապես պայմանավորված է ճանապարհային ոստիկանության կողմից իրականացվող արդյունավետ միջոցառումներով, որն էլ, իր հերթին, բարձրացնում է վարորդների և հետիոտների զգոնությունը:

2009թ. Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է խուլիգանության 355 դեպք (2008թ.՝ 286), որոնցից 51-ը (2008թ.՝ 38)՝ զենքի գործադրմամբ:

Մտահոգիչ է հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերի 188-ով աճը (415-227), ինչը վկայում է ազգաբնակչության մոտ ապօրինի պահվող հրազենի և ռազմամթերքի առկայության մասին, և այս ուղղությամբ ոստիկանությունը դեռևս լուրջ անելիքներ ունի:

2009 թ. Հայաստանի Հանրապետությունում 187 դեպքով կամ 36%-ով աճել են պետական ծառայության և պետական կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ (706-519), այդ թվում՝ 13-ով կամ 16.3%-ով նվազել են իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը: Նշված ցուցանիշները խոսում են այդ հանցատեսակի դեմ տարվող աշխատանքների բարելավման մասին, սակայն դրանք դեռևս հեռու են բավարար լինելուց:

2009թ. 57-ով աճել են ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություններից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու դեպքերը: Այդ աճը վկայում է, որ տվյալ բնույթի հանցագործությունների կանխման ուղղությամբ տարվող բացատրական աշխատանքներում դատախազության, զինկոմիսարիատի և ոստիկանության աշխատակիցները դեռևս բավական անելիքներ ունեն :

Այդ բնույթի հանցագործություններով դատախազական հսկողություն է իրականացվել 7328 նյութի նախապատրաստման և 2690 քրեական գործի քննության օրինականության նկատմամբ:

2009թ. ընդհանուր իրավասության դատարաններում ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերի վերաբերյալ քննվել է 521 (2008թ.՝ 783) քրեական գործ, որոնցով մեղադրողների կողմից մեղադրանք է պաշտպանվել 684 (2008թ.՝ 958) անձի նկատմամբ: Այդ թվում՝ 372 անձի վերաբերյալ 302 քր. գործով (2008թ.՝ 416 գործ, 505 անձ) կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2009թ. դատի տրված անձանցից 6-ը (2008թ.՝ 11) կամ 4.38%-ը դատապարտվել է տուգանքի, 62-ը (2008թ.՝ 64) կամ 47.7%-ը՝ ազատազրկման, ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել 8-ի (2008թ.՝ 18) կամ 4.8%-ի նկատմամբ, 1-ն արդարացվել է ՀՀ քր. օր.-ի 266-րդ հոդվածի 3-րդ կետի, մյուսները՝ 325-րդ հոդվածի 1-ին մասի և 333-րդ հոդվածի հիմքով: Դրանց վերաբերյալ բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք ընթացքի մեջ են:

Ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ին ընդունած համաներման որոշումը կիրառվել է 37 նյութով, վարույթը կարճված 84 քրեական գործով և դատարանի որոշմամբ նշանակված 111 պատժի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները 2009 թվականին շարունակել են աշխատանքը **կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով** օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այդ բնագավառին վերաբերող դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև, համագործակցելով ՀՀ ԿԱ ազգային վիճակագրական ծառայության հետ, վերահսկել և ապահովել են ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկում նշված և 2009թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա 2 կետով (110.1, 110.2) նախատեսված միջոցառումների կատարումը:

Կազմակերպվել են «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության առանձնահատկությունները» թեմայով Իջևան և Արմավիր քաղաքներում անցկացված հերթական փնջային խորհրդակցությունների նախապատրաստական աշխատանքները, որի շրջանակներում պատկան, իրավապահ ու մյուս

մարմիններին տրամադրվել են անհրաժեշտ վիճակագրական և այլ տեղեկատվական, վերլուծական նյութեր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ, դատախազության աշխատակիցների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ, կազմակերպվել են «Հանրային իրազեկման, դատախազության գործունեության լուսաբանման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և դատախազության աշխատակիցների միջև փոխհարաբերությունների, համագործակցության, տեղեկատվության տրամադրման մշակույթի ձևավորման, խորացման և ամրապնդման» թեմայով սեմինար-խորհրդակցություններ:

Միավորված ազգերի կազմակերպությունը դեկտեմբերի 9-ը հայտարարել է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր: Այդ օրվան էր նվիրված 2009թ. հունվարի 9-ին Երևանում անցկացված համաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ գլխավոր դատախազությունը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

15.05.2009թ. Իջևան և Վանաձոր քաղաքներում խորհրդակցություններ են անցկացվել ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության /USAID/ «Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի» (ՇՊԱԿ)՝ Տավուշի և Լոռու մարզերի կենտրոններ կատարած ՀՀ գլխավոր դատախազի այցելությունների ընթացքում:

ՀՀ դատախազության կոլեգիայի 24.06.2009թ. նիստի (արձանագրություն N 4) 2-րդ որոշման 4-րդ կետով մարզերի դատախազներին հանձնարարվել է ապահովել սերտ համագործակցությունը ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից ստեղծված շահերի պաշտպանության և աջակցման կենտրոնների (ՇՊԱԿ) հետ, օգտագործել կենտրոնների բոլոր հնարավորությունները, իրացնել նրանցից ստացված տեղեկությունները և յուրաքանչյուր կիսամյակ ամփոփ զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՇՊԱԿ-ների կողմից ուղարկված կամ նրանց միջոցով ստացված կոռուպցիոն բնույթի վերաբերյալ դիմում-բողոքների, հաղորդումների քննարկման ընթացքի վերաբերյալ: Մարզերի դատախազները մասնակցում են նաև ՇՊԱԿ-ների նիստերին:

2009թ. ավարտվել է կոռուպցիոն բնույթի 771 (2008թ.՝ 524) նյութ, որոնցից 370-ով (2008թ.՝ 390) հարուցվել է քրեական գործ, այսինքն՝ 20-ով ավելի քիչ, քան նախորդ տարում: Հարուցված քրեական գործերի թվաքանակի նվազումը պայմանավորված է ՀՀ ԱԺ-ի կողմից համաներում հայտարարելու մասին որոշման ընդունմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 348 (2008թ.՝ 108) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 267-ը (2008թ.՝ 77) արդարացման, իսկ մյուսները՝ ոչ արդարացման հիմքերով:

2009թ. հարուցված 370 կոռուպցիոն բնույթի քրեական գործերից 65-ը (2008թ.՝ 40) վերաբերել է ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված հափշտակություններին, 109-ը (2008թ.՝ 181)՝ ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածով նախատեսված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն, 37-ը (2008թ.՝ 14)՝ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելուն, 62-ը (2008թ.՝ 56)՝ ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, 17-ը (2008թ.՝ 35)՝ ՀՀ քր. օր.-ի 311-րդ հոդվածով նախատեսված կաշառք ստանալուն, 37-ը (2008թ.՝ 23)՝ ՀՀ քր. օր. -ի 314-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական կեղծիքին և այլն:

2009թ. ավարտվել է 341 քրեական գործի վարույթ (2008թ.՝ 230), այդ թվում՝ 155-ը (2008թ.՝ 42) կարճվել է, որոնցից 54-ը (2008թ.՝ 16)՝ արդարացման, 101-ը (2008թ.՝ 26)՝ ոչ արդարացման հիմքերով:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով 74 (2008թ.՝ 51) անձ գտնվել է նախնական կալանքի տակ:

Ընթացք տրված քրեական գործերից 49 (2008թ.՝ 33) անձի վերաբերյալ վարույթները կասեցվել են, որոնցից 31-ով (2008թ.՝ 27)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, մնացածը՝ այլ հիմքերով: Հետախուզման մեջ գտնվելու պատճառով կասեցված գործերի գերակշիռ մասը՝

թվով 21 (2008թ.՝ 24), վերաբերել են ՀՀ քր. օր-ի 205-րդ հոդվածով նախատեսված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու վերաբերյալ գործերով մեղադրյալներին:

Անավարտ է մնացել 139 (2008թ.՝ 145) քրեական գործ, որոնցով 40 (2008թ.՝ 21) անձ գտնվում է կալանքի տակ:

2009թ. դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի 183 (2008թ.՝ 155) քրեական գործ՝ 240 (2008թ.՝ 182) անձի նկատմամբ, որոնցից 161 (2008թ.՝ 153) քրեական գործով դատապարտվել է 208 (2008թ.՝ 178) անձ: Դրանցից 110 (2008թ.՝ 66) քրեական գործով 144 (2008թ.՝ 82) անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Դատապարտված 208 անձից 102-ը (2008թ.՝ 130) եղել է պաշտոնատար անձ:

Դատապարտված անձանցից 136-ը (2008թ.՝ 66) ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի, 50-ը (2008թ.՝ 61)՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների: Ազատազրկումը կազմում է 56,6% (2008թ.՝ 37%):

Դատաքննության արդյունքներով 85 անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ, 4 անձի նկատմամբ արձակվել է արդարացման դատավճիռ, որոնցից 2-ը՝ դատախազի՝ մեղադրանքից հրաժարվելու հիմքով:

1 (2008թ.՝ 6) անձ նախնական կալանքից ազատվել է՝ դատապարտվելով ազատազրկման հետ կապ չունեցող պատժի, որի համար հիմք է հանդիսացել դատաքննության ընթացքում պատճառված նյութական վնասի վերականգնումը, իսկ նախնական կալանքի տակ չգտնվող 11 անձ դատապարտվել է ազատազրկման:

Դատաքննության ընթացքում 1 (2008թ.՝ 0) անձի նկատմամբ առաջադրված մեղադրանքը խստացվել է, իսկ 3 (2008թ.՝ 0) անձի նկատմամբ՝ մեղմացվել:

2009թ. կոռուպցիոն բնույթի գործերով արձակված դատավճիռների և որոշումների դեմ դատախազների կողմից բերվել է 21 (2008թ.՝ 2) վերաքննիչ բողոք, դրանցից 8-ը (2008թ.՝ 1) թողնվել է առանց բավարարման, 4-ը գտնվում է ընթացքի մեջ, 6-ը բավարարվել է, իսկ 1-ով ընդունվել է այլ որոշում: Բերվել է 7 վճռաբեկ բողոք, որոնցից 2-ը բավարարվել է, 2-ը մերժվել, 1 բողոքի քննություն գտնվում է ընթացքի մեջ, 2-ով ընդունվել է այլ որոշում:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով բոլոր քրեական գործերով պատճառվել է ընդհանուր հաշվով 5.601.682.000 (2008թ.՝ 2.149.127.000) դրամի վնաս, որից պետությանը պատճառված վնասը կազմել է 5.320.582.753 (2008թ.՝ 2.143.272) դրամ: Պետությանը պատճառված նյութական վնասից վերականգնվել է 1.351.690.000 (2008թ.՝ 537.992.000) դրամ կամ 25, 4 %-ը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և նախապատրաստված նյութերի թվաքանակի ավելացումը պայմանավորված է այդ բնույթի լատենտային հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իրավապահ մարմինների համագործակցված ու օպերատիվ աշխատանքների ակտիվացմամբ, ինչպես նաև քաղաքացիների կողմից հաղորդումների քանակի աճով, որը վկայում է բնակչության կողմից իրավապահ մարմինների նկատմամբ որոշակի վստահության ձևավորման մասին:

Հասարակության իրազեկման նպատակով 2009 թվականին հրատարակվել է «Դատախազությունն ընդդեմ կոռուպցիայի» գրքույկը, որում վերլուծվել են կոռուպցիայի դեմ պայքարի առանձնահատկությունները, լուսաբանվել են կոռուպցիոն հանցագործությունները, և այդ ամենը ներկայացվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի բացահատումների օրինակներով:

2009 թվականին <u>պետական շահերի պաշտպանության</u> բնագավառում ՀՀ դատախազության կողմից կատարված աշխատանքների ծավալը նվազել է, ինչը պայմանավորված է ոլորտի ոչ հստակ իրավական կարգավորմամբ, մասնավորապես՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով տվյալ հարաբերությունների ոչ հստակ կարգավորմամբ, դրա հիման վրա ուսումնասիրություններ (ստուգումներ) իրականացնելու պրակտիկայի սահմանափակմամբ, լիազորությունների իրականացման հստակ մեխանիզմների բացակայությամբ, ինչպես նաև թիվ 07-3309 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Երևան քաղաքի դատախազության ընդդեմ Միսակ Ավետիսյանի՝ 242.906 դրամ գումարի պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հուլիսի 25-ի նախադեպային

որոշմամբ, որի համաձայն՝ հանցագործության հետևանքով տուժած անձանց պետական պատվերի շրջանակներում իրականացված բուժման ծախսերը պետությանը վերադարձման ենթակա չեն և դրանք փոխհատուցելու ռեգրեսի իրավունք պետության մոտ չի կարող ծագել: Ըստ էության, նշված որոշմամբ սահմանափակվել է քրեական դատավարության կարգով հանցագործությամբ պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցման՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դատախազության լիազորությունը, որը, ինչպես ցույց են տալիս նախորդ տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունները, պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության մարմինների գործունեության ուղղություններից է:

Այդուհանդերձ, հաշվետու ժամանակաշրջանում դատախազության մարմինները որոշակի աշխատանք են կատարել պետական շահերի պաշտպանության ոլորտում: Մասնավորապես՝ 2009թ. ՀՀ դատախազության կողմից կատարվել է 293 ստուգում (2008թ.՝ 357), հայտնաբերվել է 542 իրավախախտում, պետության շահերին հասցված վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 204 անձ, կամովին պետբյուջե է վերականգնվել 880.492.000 դրամ:

Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով, ինչպես նաև պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով, ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 24 (2008թ.՝ 19) քրեական գործ: Հարուցված քրեական գործերով արձանագրված գույքային վնասը կազմել է 1.024.921.000 դրամ:

2009թ. ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 210 հայց՝ 1.753.868.000 դրամի բռնագանձման պահանջով (2008թ.՝ 328 հայց՝ 1.063.000.000 դրամ): Դատարաններում քննված 165 հայցից բավարարվել է 158-ը՝ 540.246.000 դրամ հայցապահանջով, մերժվել է 5 հայց (2008թ.՝ 328 հայցից բավարարվել է 316-ը՝ 791.000.000 դրամի չափով, մերժվել է 14 հայց):

Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 111.000.000 դրամ:

2009թ. պետական մարմիններից ստացվել է դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 159 միջնորդություն (2008թ.՝ 282), որոնց քննարկման նպատակով դատարաններից պահանջվել և ուսումնասիրվել է նույնքան քաղաքացիական ու վարչական գործ, բերվել է 110 վճռաբեկ բողոք, մերժվել է վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ 40 միջնորդություն, 9 միջնորդություն քննարկման փուլում է:

2009թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ՀՀ վճռաբեկ դատարան է բերել 110 վճռաբեկ բողոք (2008թ.՝ 119), բերվել է նաև 7 վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 5-ը, մերժվել՝ 2-ը:

Վճռաբեկ բողոքներից բավարարվել է 26-ը (2008թ.՝ 42), 2 վճռաբեկ բողոք հետ է վերցվել (2008թ.՝ 1), դատարանի կողմից վերադարձվել է 68-ը (2008թ.՝ 55), իսկ 13 վճռաբեկ բողոք դեռևս չի քննարկվել:

2009թ. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքների պահանջի ընդհանուր գումարը կազմել է 846.000.000 դրամ, որից մերժված բողոքների գումարը կազմել է 17.700.000 դրամ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերադարձված բողոքների գումարը՝ 3.600.000.000 դրամ, գումարային արտահայտությամբ շուրջ 856.000.000 դրամի վճռաբեկ բողոք դեռևս ընթացքի մեջ է:

<u>Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում՝</u> 2009թ. Հայաստանի Հանրապետությունում նշված բնագավառին առնչվող քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական հաստատություններում և անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում կատարվել է 150 հանցագործություն 162 անձի (2008թ.՝ 104 հանցագործություն՝ 112 անձ) կողմից, այդ թվում՝ փախուստ ՔԿՀ-ից՝ 3 դեպք, փախուստի փորձ՝ 1 դեպք, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 119 դեպք, որոնցից 86-ը թմրամիջոցների իրացման, 33-ը՝ առանց իրացնելու նպատակի, խուլիգանության 1, պատիժն ի կատար ածող հիմնարկի գործունեությանը խոչընդոտելու 3 դեպք, ազատազրկման ձևով պատիժը կրելուց խուսափելու 1 դեպք, խարդախության 5 դեպք, ինքնասպանության փորձի 3 և ինքնասպանության հասցնելու 4 դեպք, պաշտոնեական դիրքի չարաշահման՝ 1 դեպք, պաշտոնեական անփութության՝ 4 դեպք, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն

գործադրելու՝ 1, բռնի սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու՝ 1, հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելու և ազատությունից ապօրինի զրկելու՝ 1 դեպք, առողջությանը թեթև վնաս պատճառելու և ծեծի 2-ական դեպքեր:

2009թ. ընթացք է տրվել 183 քրեական գործի՝ 199 անձի վերաբերյալ, որոնցից 33 քրեական գործ՝ 37 անձի վերաբերյալ փոխանցվել է 2008 թվականից, իսկ 40-ը մնացել է անավարտ: 13 քրեական գործի վարույթ կարճվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով, 4 նյութ մերժվել է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, 58 քրեական գործի վարույթ կասեցվել է ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, 11 քրեական գործ ընդդատության կարգով ուղարկվել է այլ մարմին: Հանցագործություն կատարած 162 անձից 72-ը դատապարտյալ է, 83-ը՝ այլ անձ, 6-ը՝ ՔԿՀ-ի աշխատակից:

2009 թ. դատավճիռ է արձակվել 52 գործով, դատաքննության փուլում է 5 գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական և անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանցագործությունների թիվն աճել է 46 դեպքով կամ 44.2 %-ով, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը 49-ով կամ 70 %-ով: Գրանցվել է խարդախության 5 (2008թ.՝ 0) դեպք:

Թմրամիջոցներին առնչվող հանցագործությունների զգալի աճը վկայում է մի կողմից՝ քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների ապօրինի ներթափանցման աճի մասին, մյուս կողմից՝ հանցագործության դեպքերը չգրանցելու և հաշվառումից թաքցնելու ուղղությամբ դատախազության մարմինների և ՔԿՀ-ների վարչակազմի համագործակցված աշխատանքի մասին: Միայն 2009թ. 17 (2008թ.՝ 11) անձի վերաբերյալ հարուցվել է 8 քր. գործ, որոնց հիման վրա կալանավորվել է ՔԿՀ-ի 14 աշխատակից:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված 119 դեպքից 45-ով կամ 37.2 % -ով թմրամիջոցներն ուղղիչ հիմնարկներ են ներթափանցել հանձնուքներում եղած սննդամթերքի և իրերի մեջ թաքցնելու միջոցով, իսկ 75 դեպքով՝ քննության ընթացքում թմրամիջոցների ներթափանցման ճանապարհները չեն պարզվել, և թմրամիջոցները հայտնաբերվել են դատապարտյալների անձնական կամ խցերի խուզարկությունների ժամանակ:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է ՔԿՀ-ից մեկ փախուստի փորձ և երեք փախուստ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժանամակաշրջանում գրանցվել են փախուստի և փախուստի փորձի 3-ական դեպքեր: Պատճառը ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից ռեժիմային թույլ հսկողությունն է: Ոչ պատշաճ մակարդակով է կատարվել արգելապատերի, վանդակաճաղերի տեխնիկական զննությունը, ժամանակին չեն վերացվել հայտնաբերված թերությունները:

Հանցագործությունների քանակական աճը պայմանավորված է ինչպես քրեակատարողական հիմնարկներում հանցավորության աճով, այնպես էլ այդ բնագավառում տարվող դատախազական հսկողության ուժեղացման ու կատարված հանցագործությունների բոլոր դեպքերը քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից գրանցելու և դրանց օրինական ընթացք տալու արդյունք է:

Հաշվետու ժամանակաշրջանում դատավճիռներ են կայացվել 52 քրեական գործով՝ 65 անձի նկատմամբ:

2009թ. դատախազական հսկողություն է իրականացվել 193 նյութի նախապատրաստման նկատմամբ (2008թ.՝ 138), որոնցից 140 նյութով հարուցվել են քրեական գործեր (2008թ.՝ 70): 53 (2008թ.՝ 68) նյութով մերժվել է քր. գործի հարուցումը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վարույթը կասեցվել է 57 քր. գործով: Չբացահայտված բոլոր քր. գործերը վերաբերում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը, երբ նախաքննությամբ չի պարզվել թմրամիջոցի ձեռքբերման աղբյուրը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 19.06.2009թ. ընդունած «Համաներում հայտարարելու մասին» որոշման հիման վրա ՀՀ ԱՆ քրեակատարողական 13 հիմնարկներից

պատժի կրումից ազատվել է 327 դատապարտյալ, 35 դատապարտյալի պատժաչափեր կրճատվել են:

Համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա այլընտրանքային պատիժների կատարման վարչական շրջանների և մարզերի սորաբաժանումներում հաշվառված 1203 դատապարտյալ ազատվել է պատժի հետագա կրումից:

ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. «Համաներում հայտարարելու մասին» որոշումը կիրառվել է 1565 դատապարտյալի նկատմամբ:

2009թ. դատարանների կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ են կայացվել անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 52 (2008թ.՝ 32) անձի նկատմամբ:

<u>Դատախազական աշխատանքի ամփոփ տվյալներ.</u>

2009 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 27243 նյութի նախապատրաստման, 13863 քրեական գործի նախաքննության և հետաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է քննության մարմինների կայացրած 529 (2008թ.՝ 299) որոշում: Քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2151 (2008թ.՝ 1366) գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 127 (2008թ.՝ 63) միջնորդություն (որպես խափանման միջոց՝ կալանքի, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցների կիրառման): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 3323 (2008թ.՝ 2138) քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 198 (2008թ.՝ 121) վերաքննիչ և 44 (2008թ.՝ 38) վճռաբեկ բողոք: Ընդ որում, 198 (2008թ.՝ 121) վերաքննիչ բողոքից բավարարվել է 81-ը (2008թ.՝ 35), իսկ 44 (2008թ.՝ 38) վճռաբեկ բողոքից՝ 9-ը (2008թ.՝ 11): ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 264 (2008թ.՝ 328) հայց, որոնցից դատարանի կողմից քննության է առնվել 176-ը, բավարարվել է 17-ը: Կատարվել է 2241 (2008թ.՝ 2464) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 720 (2008թ.՝ 522) նախազգուշացում, հաղորդում և միջնորդագիր: Ընթացք է տրվել 9941 (2008թ.՝ 9436) դիմումի, բողոքի և առաջարկության:

<u>ՀՀ զինվորական դատախազության հսկողության ոլորտում՝</u> 2009թ. ՀՀ ԶՈՒ-ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3422 (2008թ.՝ 2914) դեպք: Դեպքերն աճել են 508-ով կամ 17.4%-ով: Արձանագրված դեպքերից 2335-ը (2008թ.՝ 2015) կամ 68.2%-ը (2008թ.՝ 69.1%) եղել են պատահարներ, 1064-ը (2008թ.՝ 899) կամ 31.1%-ը (2008թ.՝ 30.9%)՝ հանցագործություններ, այդ թվում՝ 670-ը (2008թ.՝ 562) կամ 63%-ը (2008թ.՝ 62.5%)՝ զինվորական, 394-ը (2008թ.՝ 337) կամ 37%-ը (2008թ.՝ 37.5%)՝ այլ ընդհանուր, 23 դեպքի կամ դեպքերի 0.7 %-ի հանգամանքները դեռևս պարզված չեն:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 320 դեպքով կամ 15.9%-ով, հանցագործությունները՝ 165-ով կամ 18.3%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները աճել են 108-ով կամ 19.2%-ով, իսկ այլ հանցագործությունները՝ 57-ով կամ 16.9%-ով:

2009թ. արձանագրված 1064 (2008թ.՝ 899) հանցագործություններից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 127-ը (2008թ.՝ 103) կամ 11.9%-ը (2008թ.՝ 11.5%), որոնցից 97-ը (2008թ.՝ 61)՝ ծանր, 30-ը (2008թ.՝ 42)՝ առանձնապես ծանր: Ծանր հանցագործություններն աճել են 36-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 12-ով:

2009թ. արձանագրված 30 (2008թ.՝ 42) առանձնապես ծանր հանցագործություններից 20-ը (2008թ.՝ 27) սպանության փորձի դեպքեր են, որոնցից 19-ը (2008թ.՝ 24) կատարվել է հակառակորդի, իսկ 1-ը (2008թ.՝ 3)՝ զինծառայողների կողմից, 6-ը (2008թ.՝ 4)՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 2-ը (2008թ.՝ 6)՝ համածառայակցի կողմից կատարված սպանության, 2-ը (2008թ.՝ 4)՝ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու դեպքեր են:

2009թ. արձանագրվել է զինծառայողների մահվան 75 (2008թ.՝ 71) դեպք, որոնցից ծառայության հետ կապված է 43-ը (2008թ.՝ 32) կամ 57.3%-ը (2008թ.՝ 45.1%): Ծառայության հետ կապված մահվան 43 դեպքի հետևանքով մահացել է 44 զինծառայող: Ծառայության հետ կապված մահվան դեպքերն աճել են 11-ով: Արձանագրված մահերի պատճառները եղել են՝ հակառակորդի կողմից սպանություն՝ 6 (2008թ.՝ 4), սպանություն՝ 2 (2008թ.՝ 6) ականի

պայթյունից՝ 3 (2008թ.՝ 2), զենքի օգտագործման կանոնների խախտումով՝ 3 (2008թ.՝ 3), ինքնասպանություն՝ 4 (2008թ.՝ 3), ինքնասպանության հասցնելու՝ 5 (2008թ.՝ 1), անզգուշությամբ մահ պատճառելու հետևանքով՝ 1 (2008թ.՝ 0), բռնարարք՝ 2 (2008թ.՝ 1), հիվանդություններից՝ 6 (2008թ.՝ 3), ավտովթարից՝ 5 (2008թ.՝ 4) և դժբախտ պատահարների հետևանքով՝ 7 (2008թ.՝ 5):

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1541 (2008թ.՝ 1680) զինծառայող: Դեպքերը նվազել են 139-ով կամ 8.3%-ով: 55 (2008թ.՝ 84) զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք, 1393-ը (2008թ.՝ 1596)՝ միջին ծանրության և թեթև, 93-ի մարմնական վնասվածքի ծանրության աստիճանը ամփոփման պահին դեռևս պարզված չի եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում 1541 (2008թ.՝ 1680) մարմնական վնասվածքից 367-ը (2008թ.՝ 416) կամ 23.8%-ը (2008թ.՝ 24.8%) պատճառվել է հանցագործության, իսկ 1174-ը (2008թ.՝ 1264) կամ 76.2%-ը (2008թ.՝ 75.2%) պատահարների հետևանքով:

2009թ. արձանագրված 1064 հանցագործությունից 32-ով կամ 3%-ով հնարավոր չի եղել պարզելու հանցագործություն կատարած անձանց: Հանցագործությունների բացահայտումը կազմել է 97 %:

2009թ. ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել է 4322 նյութ (2008թ.՝ 3811), որոնցից 1719-ը (2008թ. 1566)՝ քննչական, 2603-ը (2008թ. 2245)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից:

Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1719 նյութից 759-ով հարուցվել է քրեական գործ, 817-ը մերժվել է (505-ը՝ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 179-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 3-13-րդ կետերով, 133-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդ. 2-րդ մասով), 38 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 27 նյութ միացվել է այլ նյութերի, իսկ 78 նյութ փոխանցվել է 2010թ.: Մերժված 817 նյութից 802-ի օրինականությունն ստուգվել և հաստատվել է, իսկ 15 նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվել է: Ընդ որում, վերացված նյութերից 5-ով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ ՊՆ ՌՈՎ մարմինների և զորամասերի կողմից նախապատրաստված և ընթացք տրված 2603 նյութից 1671-ով քր. գործի հարուցումը մերժվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 18-ով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 4-րդ կետի հիմքերով, 881-ն ուղարկվել է ըստ ենթակայության, 33 նյութ փոխանցվել է 2010թ.:

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված մերժման որոշումներից 26-ը կայազորների դատախազների կողմից վերացվել են և նյութերն ուղարկվել են լրացուցիչ նախապատրաստման:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՊՆ ՔԾ բաժինների վարույթում քննվող 1132 քրեական գործի նկատմամբ, որոնցից 15-ինը՝ կրկնակի (2008թ.՝ 954, որոնցից 8-ինը՝ կրկնակի), դրանցից 111-ը (2008թ.՝ 88) փոխանցվել է նախորդ տարվանից, 759-ը (2008թ.՝ 578) հարուցվել է հաշվետու տարում, որոնցից 677-ը (2008թ.՝ 527)՝ քննչական մարմնի, 82-ը (2008թ.՝ 51)՝ կայազորների զինվորական դատախազների կողմից, 109-ը (2008թ.՝ 76) ստացվել է այլ մարմիններից, 153-ով (2008թ.՝ 204) վերսկսվել է նախաքննությունը: 803 (2008թ.՝ 687) քր. գործի նախաքննությունն ավարտվել է: Ավարտված քրեական գործերից 577-ը՝ 783 անձի նկատմամբ (2008թ.՝ 447 գործ, 562 անձ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2008թ. ևս 3 քրեական գործ 3 անձի նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշումներով): 226 (2008թ.՝ 234) քր. գործով վարույթը կարճվել է: Դրանցից 41-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 160-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերի, 12-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով

2009թ. 115 (2008թ.՝ 95) քրեական գործով վարույթը կասեցվել է, որոնցից 32-ը (2008թ.՝ 26)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 47-ը (2008թ.՝ 37)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 36-ը (2008թ.՝ 32)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ և 5-րդ կետերով: 46 (2008թ.՝ 33) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 44-ը (2008թ.՝ 25) միացվել է այլ գործերի, 124-ը (2008թ.՝ 111) փոխանցվել 2010թ.:

2009թ. ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քննության է առնվել 570 քրեական գործ՝ 748 անձի (2008թ.՝ 390 գործ, 496 անձ) վերաբերյալ, որոնցից 512 (2008թ.՝ 378) քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 656 (2008թ.՝ 480) անձ: Դատարանների որոշումներով 58 քրեական գործ՝ 92 անձի (2008թ.՝ 11 գործ, 15 անձ) նկատմամբ կարճվել է, այդ թվում՝ 56 գործ 89 անձի վերաբերյալ կարճվել է համաներման որոշման հիման վրա, 1 գործ 1 անձի վերաբերյալ՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով, 1 գործ 2 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. օր.-ի 37-րդ հոդվածի հիմքով (2008թ.՝ 3 գործ, 4 անձ), արդարացման դատավճիռներ չեն կայացվել (2008թ.՝ 1 գործ, 1 անձ):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախորդ տարվա համեմատությամբ 134-ով ավելացել է դատարանների վարույթում դատավճռի կայացմամբ ավարտված քրեական գործերի և 176-ով՝ դատապարտվածների թիվը:

2009թ. դատապարտված 656 անձից 596-ը (2008թ.՝ 367) եղել է զինծառայող, որոնցից՝ 132-ը (2008թ.՝ 112) սպա, 464-ը (2008թ.՝ 255)՝ ժամկետային և պայմանագրային զինծառայողներ: Զինծառայողների հետ միևնույն գործերով դատապարտվել է նաև 60 քաղաքացի (2008թ.՝ 113):

Դատավճռի կայացմամբ ավարտված 512 քրեական գործից 465-ով՝ 599 անձի նկատմամբ կիրառվել է արագացված դատաքննություն (2008թ.՝ 272 գործով՝ 340 անձ):

2009թ. զգալիորեն ավելացել է զորամասերում կայացած արտագնա դատական նիստերում քննված քրեական գործերի թիվը՝ 71 (2008թ.՝ 51), ինչը կարևոր նշանակություն ունի հանցագործությունների կանխարգելման, զինծառայողների բարոյահոգեբանական դաստիարակության համար:

Իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 307 (2008թ.՝ 314) ուսումնասիրություն, որոնց արդյունքներով հարուցվել է 24 (2008թ.՝ 10) քրեական գործ, կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 9 (2008թ.՝ 10) որոշում:

2009թ. պետական շահերի պաշտպանության 15 հայց է հարուցվել դատարան՝ ընդհանուր 379.637.500 դրամ բռնագանձելու պահանջով (2008թ.՝ 45 հայց՝ 211.903.000 դրամ), ևս 7 հայց՝ 290.060.600 դրամ հայցային գնով, փոխանցվել է 2008-ից: 2009թ. դատարանների կողմից քննության է առնվել 15 հայց՝ 632.909.800 դրամ ընդհանուր պահանջով: Քննության առնված 15 հայցից բավարարվել է 11-ը (2008թ.՝ 27)՝ 631.875.300 (2008թ.՝ 17.210.000) դրամի չափով, որից փաստացի վերականգնվել է 285.624.300 (2008թ.՝ 1.965.000) դրամը: Հարուցված հայցերից 4-ը, որոնց ընդհանուր հայցային գինը կազմել է 1.034.500 դրամ, դատարանների կողմից մերժվել է, ևս 7 հայց գտնվում է դատաքննության փուլում:

ՀՀ զինվորական դատախազության համակարգում ընդգրկված կառուցվածքային ստորաբաժանումների և դատախազությունների կողմից իրականացված 307 ուսումնասիրություններով հայտնաբերվել է պետության գույքային շահերի 267 խախտում (2008թ.՝ 265), արձանագրվել է պետությանը պատճառված 1.050.095.000 դրամի վնաս (2008թ.՝ 1.169.132.800), որից 512.614.000 (2008թ.՝ 251.203.200) դրամը վերականգնվել է արտադատական կարգով, նախապատրաստվել է 47 (2008թ.՝ 45) նյութ, որոնք ուղարկվել են ՀՀ ՊՆ քննչական ծառայություն: Պետության շահերին հասցված վնասը կամովին հատուցելու մասին 179 (2008թ.՝ 162) նախազգուշացում է արվել:

Արտադատական կարգով և պետական շահերի պաշտպանության հայցերի բավարարման արդյունքում ընդհանուր առմամբ վերականգնվել է պետությանը պատճառված 798.238.300 (2008թ.՝ 253.168.200) դրամի վնաս:

Կազմակերպական-վերահսկողական գործունեության ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից տրվել է 59 (2008թ.՝ 90) հրաման, ուղարկվել է 20 (2008թ.՝ 12) տեղեկատվական նամակ:

Վերլուծվել են ՀՀ գլխավոր դատախազության 2009 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների աշխատանքի ծրագրերով նախատեսված 21 կետի (2008թ.՝ 18) պահանջների կատարման վերաբերյալ կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ զինվորական դատախազության կողմից տրված տեղեկանքները (զեկուցագրերը) և ապահովվել է դրանց հետագա ընթացքը՝

քննարկումը օպերատիվ խորհրդակցություններում կամ ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում:

Հրավիրվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 7 (2008թ.՝ 12) նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

- 2009 թվականի գարնանային և աշնանային զորակոչի արդյունքները.
- Կալանավորված անձանց՝ կալանավորվածներին պահելու վայր և դատապարտյալներին՝ ուղղիչ հիմնարկ ընդունելու, ինչպես նաև պատիժը կրելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու, տեսակը փոփոխելու դեպքերում օրինականության պահպանման վիճակի ուսումնասիրության արդյունքները.
- Լոռու կայազորի զինվորական դատախազության 2008թ. գործունեության համալիր ստուգման արդյունքները.
- ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնում 2008թ. ընթացքում աշխատանքի կազմակերպման, հանձնարարականների կատարման, կատարողական կարգապահության պահպանմանն առնչվող հարցադրումներով կատարված աշխատանքների ստուգման արդյունքները.
- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2009 թվականի տարեկան գործունեության մասին ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության 2007-2008թթ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների վերաբերյալ հաղորդումը.
- Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հաղորդումների ընդունման, նյութերի նախապատրաստման, նախաքննության իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակը և դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկան.
- 2008թ. ընթացքում սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը, դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկան.
- 2008թ. ընթացքում գույքի բռնի հափշտակությունների (ավազակություն, կողոպուտ) բացահայտման, մինչդատական վարույթի նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը և մեղադրանքի պաշտպանության պրակտիկան.
- 2007-2008թթ. ընթացքում ՀՀ ՔՈւ-ում արձանագրված ինքնախեղումների (ինքնավնասումների) դեպքերով հաղորդումների ընդունման, հաշվառման, գրանցման և լուծման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական գործունեության արդյունքները.
- 2004-ից 2009թ. 1-ին կիսամյակի ընթացքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (լեգալացնելու) դեպքերով քրեական գործերի քննության նկատմամբ դատախազական հսկողության վիճակը.
- 2009թ. 1-ին կիսամյակում դատախազների ատեստավորման նախապատրաստման աշխատանքների և ատեստավորման անցկացման վիճակը.
- 2007-2008թթ. ընթացքում ՀՀ ՔՈւ-ում արձանագրված զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների (ՀՀ քր. օր.-ի 356-360-րդ հոդվածներ) վերաբերյալ հաղորդումների ընդունման, հաշվառման, գրանցման և լուծման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական գործունեության արդյունքները.
- 2008թ. և 2009թ. 1-ին կիսամյակի (2005-2009թթ. վիճակագրական տվյալների ընդգրկումով) ընթացքում ՀՀ տարածքում օտարերկրյա պետության քաղաքացիների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործությունների փաստերով հարուցված քրեական գործերով նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը.
- 2009թ. 9 ամիսների ընթացքում բնակարանային գողության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի նախաքննության և օրինականության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Քննարկումների արդյունքներով կայացված համապատասխան որոշումներով տրվել են հանձնարարականներ, վերահսկվել է դրանց կատարումը, ինչպես նաև առանձին դեպքերում միջնորդություններ են ներկայացվել պատկան մարմիններին:

2009թ. ՀՀ դատախազության կողմից իրականացվել է 6 կարգապահական վարույթ՝ 9 դատախազի նկատմամբ: Մասնավորապես՝ 1 դեպքում 1 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ է իրականացվել մասնագիտական վարքագծի կանոնների պահանջները խախտելու համար, 3 դեպքում 4 դատախազի նկատմամբ՝ նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ թերի և մակերեսային դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացնելու համար, 1 դեպքում 2 դատախազի նկատմամբ՝ իրենց լիազորությունների սահմանն անցնելու համար և 1 դեպքում 2 դատախազի նկատմամբ՝ ծառայողական պարտականություններն անփույթ կատարելու և չկատարելու հետ պայմանավորված ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարման, օրենքը խախտելու և դատախազի հիմնական պարտականությունները չկատարելու համար:

Կատարված աշխատանքների արդյունքում 1 դատախազ ազատվել է զբաղեցրած պաշտոնից, 3-ն ազատվել են աշխատանքից իրենց դիմումների համաձայն, 1 դատախազի նկատմամբ կիրառվել է պաշտոնի իջեցում, 2-ի նկատմամբ՝ նկատողություն, իսկ 2-ը նախազգուշացվել են:

Առաջիկայում, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, նախատեսված է դատախազություններում և կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացնել դատախազական լիազորությունների իրականացման, աշխատանքների կազմակերպման և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ցուցումների, հրամանների, հանձնարարականների կատարման հարցերով ուսումնասիրություններ և համալիր ստուգումներ, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել այդ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ, վերահսկել հայտնաբերված խախտումների փաստացի վերացումը, տեղերում ստուգել կատարողական կարգապահությունը:

Վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված մոտ 1822 (2008թ.՝ 1949) դիմում-բողոք կամ հանձնարարական:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրման և վիճակագրական հաշվետվությունների կազմման, ներկայացման, կիրառման և տվյալների փոխանակման մատչելիությունն ապահովելու նպատակով ՀՀ դատախազությունը համագործակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր կոմիտեի (ԳԴԿԽ) հետ: Վերջինիս միջոցով, ՀՀ դատախազության հարցումով ստացվել են ԱՊՀ մասնակից մի շարք պետությունների առաջարկներ՝ ԱՊՀ մասնակից պետությունների համար միասնական վիճակագրական հաշվետվության նոր ձևեր մշակելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսի հանդիպման ժամանակ քննարկվել են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման շրջանակներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված՝ ՀՀ դատախազության համակարգում վարվող վիճակագրական հաշվետվությունների լրացման, կազմման և ներկայացման համակարգչային ծրագիր մշակելու, ներդնելու ու շահագործելու անհրաժեշտությանն առնչվող հարցերը: Վերջինս հավանություն է տվել ՀՀ դատախազության նախաձեռնությանը՝ այն համարելով հանցավորության, քննչական և դատախազական աշխատանքի վիճակի, կառուցվածքի, շարժընթացի վերլուծության և ամփոփման աշխատանքներում, ինչպես նաև իրավապահ մարմինների համապատասխան բնագավառների գործունեությունում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված գործնական միջոցառում:

Ներկայացվել է 10 (2008թ.՝ 6) զեկույց, անհրաժեշտ վերլուծական նյութեր՝ դատախազական գործունեության ոլորտներում իրավիճակի և զարգացման միտումների մասին, ինչպես նաև առաջարկություններ՝ դրանց առնչվող հիմնահարցերի լուծման վերաբերյալ, այդ թվում՝

- «2008 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցի ուսումնասիրության,

- Դատախազների ամսական միջին ծանրաբեռնվածության,

- 2009թ. ՀՀ-ում կատարված հանցագործությունների, ինչպես նաև դրանց մեջ գողությունների և, մասնավորապես, բնակարանային գողությունների տեսակարար կշռի աճի ու բացահայտման ցածր ցուցանիշների,

- «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ-ի 19.06.2009թ. որոշման կիրառման վերաբերյալ և այլն:

Ըստ անհրաժեշտության, ՀՀ գլխավոր դատախազին, նրա տեղակալներին, դատախազության ստորաբաժանումներին, դատախազություններին, հետաքննության ու նախաքննության և շահագրգիռ մյուս պատկան մարմիններին ու կազմակերպություններին տրամադրվել է հանցավորության վիճակի, հանցագործությունների բացահայտման, դատախազական գործունեության մասին համապատասխան վիճակագրական և դատախազական գործունեությանն առնչվող 172 (2008թ.՝ 193) տեղեկատվական նյութ, այդ թվում՝ ՀՀ և ԼՂՀ գլխավոր դատախազությունների միջև 09.12.2008թ. կնքված համագործակցության ու փոխօգնության մասին համաձայնագիր-հուշագրով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում ԼՂՀ գլխավոր դատախազությանը տրամադրվել են դատախազության լիազորությունները և գործունեության կազմակերպման կառուցակարգերը սահմանող բազմաթիվ իրավական ակտեր, ուսումնական ձեռնարկներ ու տեղեկատվական նյութեր:

ՀՀ դատախազությունը, համագործակցելով ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ դատական դեպարտամենտի, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ ԿԱ ազգային վիճակագրական ծառայության հետ, վերահսկել և ապահովել է ՀՀ Նախագահի 21.04.2009թ. ՆԿ 59-Ն կարգադրությամբ հաստատված՝ «Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկի, ՀՀ Կառավարության 27.03.2008թ. N 1039-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի միջոցառումների» ցանկի, ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկի կետերով նախատեսված միջոցառումների կատարումը և 2009 թվականի արդյունքների վերաբերյալ համապատասխան հաղորդումներ է ուղարկել պատկան մարմիններին:

Միջազգային-իրավական օգնության բնագավառում ՀՀ դատախազությունը, միջազգային կոնվենցիաներին, պայմանագրերին, համաձայնագրերի դրույթներին համապատասխան, հաշվետու ժամանակահատվածում ընթացք է տվել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն կազմակերպելու վերաբերյալ 79 միջնորդության (2008թ.՝ 101), որոնցից 61-ը ԱՊՀ մասնակից պետություններից, 18-ը՝ այլ պետություններից:

Հայաստանի Հանրապետության դատախազության ստորաբաժանումներից ստացված փոխադարձ իրավական օգնություն հայցելու մասին 53 միջնորդություն (2008թ.՝ 42) ուղարկվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին, որոնցից 26-ը՝ ԱՊՀ-ի, իսկ 27-ը՝ այլ պետությունների իրավասու մարմիններին:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել և քննության է առնվել Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված՝ այլ պետության կողմից հետախուզվող անձանց հանձնման վերաբերյալ 95 միջնորդություն (2008թ.՝ 102), որոնցից 89-ը՝ ԱՊՀ անդամ-պետություններից, 6-ը՝ այլ պետություններից:

2009թ. ՀՀ տարածքում հայտնաբերվել է այլ պետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող 157 անձ (2008թ.՝ 180):

Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և այլ պետության տարածքում հայտնաբերված (կալանավորված) 115 անձի հանձնումն ապահովելու նպատակով, ՀՀ դատախազության միջոցով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին են ներկայացվել միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն կազմված

հանձնման մասին միջնորդություններ: Հանձնման միջնորդություններից 111-ն ուղարկվել է ԱՊՀ անդամ-պետությունների, իսկ 4-ը՝ այլ պետությունների իրավապահ մարմիններին:

ՀՀ դատախազության միջոցով այլ պետությունների իրավապահ մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ ուղարկվել են 28 քրեական գործ և նախապատրաստված նյութեր, որոնցից 21-ը՝ ԱՊՀ անդամ-պետությունների, իսկ 7-ը՝ այլ պետությունների իրավապահ մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարած հանցագործության համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման ենթարկելու միջնորդությամբ ՀՀ դատախազությունը ստացել է 31 քրեական գործ և նյութ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունում կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների, իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակությունների շուրջ 50 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հետ:

Զգալիորեն ակտիվացել է իրավական համագործակցությունը ՀՀ դատախազության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության միջև:

<u>ՀՀ դատախազությունն իրավական ապահովման ոլորտում</u> իրականացրել է տարբեր իրավական ակտերի մշակման աշխատանքներ: Մասնավորապես՝ 2009 թվականին սահմանված կարգով ընթացք է տրվել 49 (2008թ.՝ 31) օրինագծի, որոնցից 15-ը (2008թ.՝ 19) ՀՀ Կառավարության որոշումների նախագծեր են:

2009թ. ՀՀ դատախազությունը միջազգային փաստաթղթերի վերաբերյալ նախապատրաստել է 11 առաջարկություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և ամփոփվել է դատախազության գործունեությանը վերաբերող 90 իրավական ակտերի նախագիծ, որոնց վերաբերյալ ներկայացվել է կարծիք:

Օրենսդրության կատարելագործման և դատախազության գործունեության բարելավման նպատակով ամփոփվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների, բաժինների և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների կողմից ստացված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները: Ամփոփման արդյունքներով մշակվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինագծեր:

ՀՀ դատախազության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրինագիծը, որն ընդգրկում է տնտեսական գործունեության դեմ ուղղված բոլոր հանցագործությունները, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրինագիծը, հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել են Ազգային ժողովի կողմից:

2009թ. ՀՀ դատախազությունը մասնակցել է դատախազության գործունեությանը վերաբերող հայեցակարգերի, օրենքների և այլ իրավական ակտերի մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքներին:

<u>Անձնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտում</u> <u>ՀՀ դատախազությունը</u> 2009թ. դատախազների վերաբերյալ նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ստորագրմանն է ներկայացրել 749 (2008թ.՝ 744) հրամանի նախագիծ:

2009թ. ՀՀ դատախազության համակարգում աշխատանքի է ընդունվել 27(2008թ.՝ 19) դատախազ, 61 (2008թ.՝ 49) դատախազ տեղափոխվել է տարբեր պաշտոնների, պաշտոնից ազատվել է 18 (2008թ.՝ 23) դատախազ, որոնցից 17-ը՝ անձնական դիմումի համաձայն: 1 դատախազի նկատմամբ կիրառվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժը: 1 դատախազի լիազորությունները կասեցվել են՝ մինչև քրեական գործով վերջնական որոշում ընդունելը:

2009թ. մի շարք դատախազներ ՀՀ Նախագահի և ԼՂՀ Նախագահի հրամանագրերով, ՀՀ վարչապետի որոշմամբ, ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ ազգային անվտանգության

ծառայության տնօրենի, ՀՀ ոստիկանության պետի, ՀՀ գլխավոր դատախազի, ԼՂՀ գլխավոր դատախազի հրամաններով խրախուսվել են, իսկ 66 (2008թ.՝ 122) աշխատակցի տրվել է դրամական պարգևատրում:

2009թ. հերթական դասային աստիճաններ են շնորհվել 60 աշխատակցի:

Ատեստավորման արդյունքում որակավորման հանձնաժողովի միջնորդությամբ 3 դատախազի շնորհվել է արտահերթ դասային աստիճան:

2009թ. գումարվել է ՀՀ դատախազության աշխատակիցների որակավորման հանձնաժողովի 22 նիստ: Քննարկվել է 88 աշխատակցի գնահատագիր:

Որակավորման հանձնաժողովի նիստին ներկայացած դատախազներից 63-ի նկատմամբ կայացվել է զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու վերաբերյալ որոշում, 5-ի նկատմամբ՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով, 3-ի նկատմամբ՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին, 1-ի նկատմամբ՝ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի տեղափոխելու մասին:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 64 ուսանողի արտադրական պրակտիկան ՀՀ դատախազության ստորաբաժանումներում:

2009թ. աշխատանքներ են կատարվել **<u>ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները</u>** սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունում ստացվել է 9941 (2008թ.՝ 9436) դիմում-բողոք, որոնցից 2046-ը (2008թ.՝ 2312) եղել է կրկնակի, բավարարվել է 596-ը (2008թ.՝ 1251), մերժվել է 683-ը (2008թ.՝ 1839), ուղարկվել է այլ մարմին 3574-ը (2008թ.՝ 3003), 392 (2008թ.՝ 247) անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, անավարտ է մնացել 165-ը (2008թ.՝ 116):

ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 118 (2008թ.՝ 138) քաղաքացու ընդունելություն, որոնցից 57-ին (2008թ.՝ 29) ընդունել են ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները, իսկ մնացածներին՝ ՀՀ գլխավոր դատախազության քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնի պետն ու դատախազը:

Ընդունելության ներկայացած քաղաքացիներին տրվել են պատշաճ պարզաբանումներ, նրանց դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

<u>«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը</u> (այսուհետ՝ դպրոց) 2008թ. ուսուցման և որակավորման բարձրացման դասընթացների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման բնագավառում իրականացրել է 269 (2008թ.՝ 332) դատախազի և 240 (2008թ.՝ 270) պետական ծառայողի, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 19 (2008թ.՝ 16) անձի մասնագիտական պատրաստում: Դպրոցը անցկացրել է նաև 8 դատախազի լրացուցիչ վերապատրաստում:

Դպրոցը մշակել է «Կոռուպցիան և պայքարը դրա դեմ» դասընթացի ուսումնական ծրագիր, որը հետագայում երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի կողմից՝ հանրակրթական դպրոցներում կիրառելու համար:

Հայաստանի Հանրապետության միջնակարգ ուսումնական հաստատությունների ավագ դասարանների աշակերտների համար դպրոցը կազմակերպել է կոռուպցիայի վերաբերյալ դասընթացներ:

Ծրագիրը դասավանդվել է Երևան քաղաքի հանրակրթական 8 դպրոցի ավագ դասարանների շուրջ 500 աշակերտի համար:

Դպրոցն իրականացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող 100 և ՀՀ ՊՆ զինվորական կոմիսարիատների 300 աշխատակցի վերապատրաստում: Կրթական գործընթացի ընթացքում մշակվել և կազմվել են «Հետաքննության մարմինների գործունեությունը» և «Զինվորական հաշվառման բնագավառի վարչական իրավախախտումների դեմ պայքարի հիմնախնդիրները» խորագրերով ուսումնական ձեռնարկների թղթային և ձայնային տարբերակները, ինչն առավել մատչելի է դարձրել նյութի ընկալելիության մակարդակը:

Դպրոցում դատախազության և այլ պետական մարմինների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են սեմինար-քննարկումներ:

Անցկացվել են «Դատարանների կողմից քննվող քրեական գործերին մասնակցող դատախազների աշխատանքների կազմակերպում, քրեական գործերով դատական որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման մեթոդիկա» թեմայով գիտագործնական խորհրդաժողով և «Հանձնման մասին միջազգային պայմանագրերի կատարման կազմակերպման և ապահովման բնագավառի խնդրահարույց հարցերը» թեմայով սեմինար, որոնց մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազության և ՌԴ գլխավոր դատախազության աշխատակիցներ, ինչպես նաև դպրոցի անձնակազմը:

Դատախազության 2009 թվականի գործունեության արդյունքները քննարկվել և ամփոփվել են Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2010 թվականի փետրվարի 24-ի նիստում, որին մասնակցել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ա.Բաղդասարյանը, իսկ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների աշխատանքի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասնակցությամբ անցկացված խորհրդակցություններում, որտեղ նշվել են դատախազության գործունեության ընթացքում տեղ գտած բացթողումներն ու թերությունները և դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության հետագա բարձրացման ուղղություններն ու միջոցառումները:

Հավաստիացնում եմ, որ շարունակելով իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը կանի հնարավորինս՝ հանրապետությունում օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգի ամրապնդմանն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև օրինականության պահպանմանն առնչվող սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական գործունեության կազմակերպման ու իրականացման աշխատանքում տեղ գտած թերություններն ու բացթողումները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ հետագա աշխատանքների առավել արդյունավետությունն ապահովելու համար:

Հարգանքով՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ